«Ստեփան Ավագյանի հուշամրցաշար»
«Ջերմուկ 2024» միջազգային շրջանային մրցաշար

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Հայաստանի շախմատի ակադեմիան «Ջերմուկ Աշխարհ» առողջարանային համալիրի հետ համատեղ 2024թ. հունիսի 9-18-ը անցկացնում է Ստեփան Ավագյանի հուշամրցաշարը: Մրցաշարն անցկացվում է շրջանային մրցակարգով՝ 10 մասնակիցներով, 9 խաղափուլով ՖԻԴԵ-ի կանոնների համաձայն:

Ժամակարգը. 90 րոպե առաջին 40 քայլի համար, այնուհետև 30 րոպե՝ մինչև պարտիայի ավարտը՝ 30 վայրկյան հավելումով՝ սկսած առաջին քայլից:

Մրցանակային ֆոնդը կազմում է **7 450 000** ՀՀ դրամ /համարժեք է 18 400 ԱՄՆ դոլարին/:

1-ին մրցանակ – 3 100 000
2-րդ մրցանակ – 1 850 000
3-րդ մրցանակ – 1 500 000
4-րդ մրցանակ – 1 000 000

Բոլոր մրցանակները հարկվելու են ՀՀ հարկային օրենսգրքի համաձայն:

Հատուկ մրցանակ է սահմանել մեր գործընկեր “**Chessify**” ընկերությունը մրցաշարի մասնակիցների համար.

1-ին մրցանակ – փաթեթ /350$/
2-րդ մրցանակ – փաթեթ /300$/
3-րդ մրցանակ – փաթեթ /250$/
4-րդ մրցանակ – փաթեթ /200$/
5-րդ մրցանակ – փաթեթ /150$/
6-րդ մրցանակ – փաթեթ /150$/
7-րդ մրցանակ – փաթեթ /150$/
8-րդ մրցանակ – փաթեթ /150$/
9-րդ մրցանակ – փաթեթ /150$/
10-րդ մրցանակ – փաթեթ /150$/

Հավասար միավորներ հավաքելու դեպքում, դրամական մրցանակները բաշխվում են հավասարաչափ, իսկ տեղերը որոշվում են ըստ՝

1. Ջոնեբորն-Բերգերի գործակցի,
2. անձնական հանդիպումների արդյունքի /արդյունքների/
3. սևերով խաղացած պարտիաների առավելագույն քանակի,
4. հաղթանակների առավելագույն քանակի:

Ժամանակացույց.

9 հունիսի – բացման արարողություն	19:00
10 հունիսի – 1-ին տուր	15:00
11 հունիսի – 2-րդ տուր	15:00
12 հունիսի – 3-րդ տուր	15:00
13 հունիսի – 4-րդ տուր	15:00
14 հունիսի – 5-րդ տուր	15:00
15 հունիսի – 6-րդ տուր	15:00
16 հունիսի – 7-րդ տուր	15:00
17 հունիսի – 8-րդ տուր	15:00
18 հունիսի – 9-րդ տուր	11:00
18 հունիսի – փակման արարողություն	18:00

Անցկացման վայրը՝ ՀՀ, Վայոց Ձորի մարզ, Ջերմուկ աշխարհի առողջարանային համալիր:

Մրցաշարի կոորդինատոր: Մերի Թաշչյան
E-mail: tournaments@chessacademy.am
Tel.: +374 10-448473, +374 55 630640